



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«23» մայիսի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 17-Ա/Ք

ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2019 թվականի մայիսի 23-ի N 16-Ա/Ք հրամանով հաստատված «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգի» 4-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերը գնահատելու նպատակով:

2. Հաստատել՝

1) հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ասատրյան Ռուզան	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ԳԳԿ վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Աղբալյան Սուրեն	ՀԱՊՀ մետալուրգիայի և նյութագիտության ամբիոնի պրոֆեսոր
Գալստյան Արմեն	ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ
Հարությունյան Վաչագան	ԱԱԳԼ կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժնի վարիչ
Տիրացույան Սուսաննա	ՀՌՀ կենսահինֆորմատիկայի, կենսահինժեներիայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի դոցենտ
Սարգսյան Հակոբ	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ԳԳԿՎ գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Մ Ր Ց Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

I. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետ՝ Կազմակերպություն) ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտերի (այսուհետ՝ Հայտ) գնահատումն իրականացնում է մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն Պ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

- 1) Հայտերի գնահատումը,
- 2) Հայտերի վարկանիշային ցանկի կազմումը:

III. Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Ը

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

7. Հանձնաժողովի անդամները գնահատում են Հայտը՝ լրացնելով գնահատման թերթիկը (Հանձնաժողովի աշխատակարգի հավելված): Գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր՝ 1 միավորի ճշտությամբ:

8. Հանձնաժողովը կազմում է Հայտերի վարկանիշային ցանկ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հայտի գնահատականների միջին թվաբանականը:

9. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

10. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) վարում է Հանձնաժողովի նիստերը.
- 2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
- 3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

11. Հանձնաժողովի անդամը՝

- 1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.
- 2) լրացնում է գնահատման թերթիկը.
- 3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
- 4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

12. Հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) Հանձնաժողովի անդամ չէ.
- 2) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.
- 3) նախապատրաստում է Հայտերի գնահատման թերթիկները.
- 4) Հայտերը տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.
- 5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
- 6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության ներքո գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ
ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

Հայտի ծածկագիրը _____

Հ/հ	Չափորոշիչներ	Գնահատական	
		առավելագույն	վերջնական
1.	Գիտական սարքի/սարքավորման անհրաժեշտության հիմնավորում		
	կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտությունը հիմնավորված է լավ	5	
	կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտությունը հիմնավորված է բավարար	3	
	կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտությունը բավարար հիմնավորված չէ	1	
2.	Գիտական սարքի/սարքավորման համատեղ օգտագործման առաջարկություն		
	առաջարկվում է 4 և ավելի կազմակերպությունների կողմից համատեղ օգտագործման համար	5	
	առաջարկվում է 2-3 կազմակերպությունների կողմից համատեղ օգտագործման համար	3	
	համատեղ օգտագործման առաջարկություն չկա	1	
3.	Համաֆինանսավորող կողմի (կողմերի) առկայություն		
	առկա են արտաբյուջետային միջոցների հաշվին համաֆինանսավորող մեկից ավելի կողմեր	5	
	համաֆինանսավորող կողմ է հայտատու կազմակերպությունը և/կամ շահագրգիռ կազմակերպությունը	3	
	համաֆինանսավորում չի նախատեսվում	1	
Հայտի ընդհանուր գնահատական		15	

Գնահատողի ստորագրություն

Գնահատման ամսաթիվ